ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 29.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/36

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Ա.Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 13.04.2020թ.),

«Արմա թրեյդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Մ.Շահնազարյանի (լիազորագիր, տրված՝ 18.04.2020թ.),

քննելով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ի կողմից 13.04.2020թ. ներկայացված (14.04.2020թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/36 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 13.04.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար Լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի տեխնիկական բնութագրով պահանջվել են հետևյալ ապրանքները.

Չափաբաժինների համարները	Չափաբաժնի անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	Լուսատու	FHB 03-230-50-D60 տիպի, կամ համարժեքը ,աշխատանքային լարում՝ 230Վ, հզորություն՝ 230Վտ, սնող ցանցի լարում՝ 176-264Վ, ցանցի հաճախականություն՝ 47-63Հg, հզորության գործակիցը (cosF) ոչ պակաս – 0,96, լուսամփոփի հոսանքի ծախսը ոչ ավելի-0,7Ա, հոսանքահարումից պաշտպանության դաս՝ 1, լուսադիոդների քանակը -570, լուսադիոդների լուսայի հոսքը – 40771 լմ, լուսամփոփի լուսային հոսքը – 32109 լմ, գունային ջերմաստիճը – 4700-5300 Կ, լուսային հոսքի տատանումը -1%, շահագործման ջերմաստիճանը – -40°C ÷ 50°C, կլիմայական կատարումը Y-1 , շրջակա միջավայրի ազդեցությունից պաշտպանոջթյան աստիճանը – IP66, լուսամփոփի իրանի նյութը – ալյումինե համաձուլվածքպոլիմերային ծածկույթով, լուսացիրի նյութը - ՊՄՄԱ+թրծած ապակի , ամրացումը – կախովի, եզրաչափսերը 320x215մմ, քաշը ոչ ավել -8կգ, աշխատանքային պաշարը ոչ պակաս- 100000 ժամ, արտադրական երաշխիքը 5 տարի:
2	Լուսատու	Լուսադիոդային, YCC-70 կամ համարժեքը , հզորությունը 75 Վտ, լուսային հոսքը 9400լմ, գաբարիտ՝ 868x214x98 մմ, աշխատանքային ջերմաստիճանի ընդգրկույթը -60°C÷ +50°C:

Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտեր են ներկայացրել «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ», «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ - Թիվ 1 չ/բ համար առաջարկվող լուսատուի երկրաչափական ձևը և չափերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ինչպես նաև փոքր է լուսային հոսքը:

«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար:

«ՌԵՖորս Գրուպ» ՍՊԸ - Ապրանքի անվան դաշտում նշված չէ ապրանքի անվանումը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 41-րդ կետը, հանձնաժողովը որոշեց կասեցնել նիստը և առաջարկել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» և «ՌԵՖՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերություններին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Իսկ արդեն www.gnumner.am համացանցային կայքում 09.04.2020թ. հրապարակված տեղեկատվության համաձայն՝ հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որտեղ որպես ընտրված մասնակից նշվել է «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 4.3 կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Համաձայն «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ սահմանվել են հետևյալ պարամետրերը՝

1-ին չափաբաժին՝ FHB 03-230-50-D60 տիպի, կամ համարժեքը,աշխատանքային լարում՝ 230Վ, հզորություն՝ 230Վտ, սնող ցանցի լարում՝ 176-264Վ, ցանցի հաճախականություն՝ 47-63Հg, հզորության գործակիցը (cosF) ոչ պակաս – 0,96, լուսամփոփի հոսանքի ծախսը ոչ ավելի-0,7Ա, հոսանքահարումից պաշտպանության դաս՝ 1, լուսադիոդների քանակը -570, լուսադիոդների լուսայի հոսքը – 40771 լմ, լուսամփոփի լուսային հոսքը – 32109 լմ, գունային ջերմաստիճը – 4700-5300 Կ, լուսային հոսքի տատանումը -1%, շահագործման ջերմաստիճանը – -40^{0}C ÷ 50^{0}C, կլիմայական կատարումը Y-1 , շրջակա միջավայրի ազդեցությունից պաշտպանոջթյան աստիճանը – IP66, լուսամփոփի իրանի նյութը – ալյումինե համաձուլվածքպոլիմերային ծածկույթով, լուսացիրի նյութը - ՊՄՄԱ+թրծած ապակի , ամրացումը –կախովի, եզրաչափսերը

320x215մմ, քաշը ոչ ավել -8կգ, աշխատանքային պաշարը ոչ պակաս- 100000 ժամ, արտադրական երաշխիքը 5 տարի:

2-րդ չափաբաժին՝ Լուսադիոդային, YCC-70 կամ համարժեքը , հզորությունը 75 Վտ, լուսային հոսքը 9400լմ, գաբարիտ՝ 868x214x98 մմ, աշխատանքային ջերմաստիճանի ընդգրկույթը -60^{0}C÷ +50^{0}C:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի և Հրավերի 8.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ընկերությունը նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը, այդ թվում նաև տեխնիկական բնութագիրը, գնահատվել է հրավերի պահանջներին բավարարող: Մինչդեռ՝ «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում առաջարկվող պարամետրերում և հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պարամետրերում առկա են բազմաթիվ անհամապատասխանություններ, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից կարծես թե միտումնավոր այդպես էլ չեն արձանագրվել, մասնավորապես՝ ցանցի հաճախականություն՝ 47-63Հg /ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 45-65Հg/, հզորության գործակիցը (cosF) ոչ պակաս – 0,96 /ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի նշվել/, լուսադիոդների քանակը -570 /ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի նշվել/, լուսադիոդների լուսայի հոսքը – 40771 լմ /ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 33300լմ/, գունային ջերմաստիճը – 4700-5300 Կ /ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 5000 Կ/, լուսային հոսքի տատանումը -1% /ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի նշվել/ .... :

Ընկերությունը հայտնել է, որ նույն խնդիրն առկա է նաև «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի մասով: Մասնավորապես՝ ըստ գնահատող հանձնաժողովի՝ ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիակական բնութագրում առկա է միայն հետևյալ խնդիրը. թիվ 1 չ/բ համար առաջարկվող լուսատուի երկրաչափական ձևը և չափերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ինչպես նաև փոքր է լուսային հոսքը:

Մինչդեռ՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում առաջարկվող պարամետրերում և հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պարամետրերում առկա են բազմաթիվ այլ անհամապատասխանություններ, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից կարծես թե նորից միտումնավոր այդպես էլ չեն

արձանագրվել, մասնավորապես՝ լուսամփոփի լուսային հոսքը – 32109 լմ /ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 28000/, քաշը ոչ ավել -8կգ /ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 9/, չեն համապատասխանում նաև առաջարկվող լուսատուի երկրաչափական ձևը, չափերը և այլն ...:

Ընկերությունը նշել է, որ թվարկված և դեռևս ոչ բոլոր անհամապատասխանությունները ուղղակիորեն անտեսվել են գնահատող հանձնաժողովի կողմից և անհասկանալի կերպով առանց արձանագրությունների հրապարակման՝ միանգամից գնահատող հանձնաժողովը որոշել է հրապարակել պայմանագիր կնքելու մասին հայտարարություն:

Ընկերությունը ցանկացել է բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել ևս մեկ կարևոր հանգամանի վրա, այն է՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությունում առկա չէ գնահատող հանձնաժողովի որևէ անդամի ստորագրություն, և դեռ ավելին, մինչ օրս տեղեկագրում չեն հրապարակվում արձանագրություններ, թե որ մասնակիցներն են կատարել շտկումներ, որ մասնակիցն է ճանաչվել ընտրված մասնակից և այլն: Առկա չէ նաև հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրությունը:

Մինչդեռ, համաձայն Հրավերի 8.13 կետի՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման և գնահատման նիստի ավարտից հետո ոչ ուշ, քան հաջորդող աշխատանքային օրը՝ հայտերի բացման և գնահատման նիստի արձանագրության բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը և սույն հրավերի 1-ին մասի 3.5 կետում նշված հիմնավորումների քննարկման ամփոփաթերթը, որը պարունակում է տեղեկություններ նաև հիմնավորումները ստանալու ամսաթվի և էլեկտրոնային փոստի հասցեների վերաբերյալ, հրապարակում է տեղեկագրում: Եթե հիմնավորումներ չեն ներկայացվել, ապա հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ դրա մասին կատարվում են համապատասխան նշումներ:

Ընկերությունը հանգել է այն եզրակացության, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի, ինչպես նաև Հրավերի 8.2 կետի պահանջները, քանի որ բավարար է գնահատել հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտեր, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 3-րդ հոդվածի 1-

ին մասի պահանջների խախտման (ձեռք չի բերվում պատվիրատուի կարիքին համապատասխանող ապրանք): Միևնույն ժամանակ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել են նաև Ընթացակարգի հրավերի 8.13 կետի պահանջները:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի և «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու և «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից հայտարարելու մասին որոշումները դադարեցնելուն:

Ընկերությունը, ի լրումն վերը շարադրված բողոքի, հայտնել է հետևյալը.

Վերը շարադրված անհամապատասխանությունների փաստի առթիվ հայտնել է, որ 1-ին չափաբաժնի մասով՝ լուսամփոփի իրանի նյութը-ալյումինե համաձուլվածք պոլիմերային ծածկույթով, լուսացիրի նյութը-ПММА+թրծած ապակի, ամրացումը-կախովի, եզրաչափքերը 320x215մմ /ՍՊԸ-ի կողմից նշվել միայն լուսամփոփի իրանի նյութը ալյումին ամրացումը կախովի չափսերը 360x280մմ/, հզորության գործակիցը (cosF) ոչ պակաս-0,96 /ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի նշվել/, ցանցի հաճախականություն՝ 47-63Հg /ՍՊԸ-ի կողմից նշվել է 47-63Հg/, քաշը ոչ ավել -8կգ /ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի նշվել/: 2-րդ չափաբաժնի մասով՝ հզորությունը 75 Վտ / 80Վտ/, գաբարիտ՝ 868x214x98 մմ /ՍՊԸ-ի կողմից նշվել է 850x75x130 մմ/, աշխատանքային ջերմաստիճանի ընդգրկույթը -60^{0}C÷ +50^{0}C /ՍՊԸ-ի կողմից նշվել է -60C+45C/:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում առաջարկվող պարամետրերում և հրավերի տեխնիկական բնութագրով սահմանված պարամետրերում Ընկերության կողմից նշվել են հետևյալ անհամապատասխանությունները՝ լուսամփոփի լուսային հոսքը-32109 լմ /ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 28000/, քաշը ոչ ավել-8կգ /ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 9/, չեն համապատասխանում նաև առաջարկվող լուսատուի երկրաչափական ձևը, չափերը և այլն ...:

Այս անհամապատասխանությունների փաստի առթիվ Ընկերությունը նշել է նաև, որ 1-ին չափաբաժնի մասով՝ եզրաչափքերը 320x215մմ /ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի նշվել/, հզորության գործակիցը (cosF) ոչ պակաս – 0,96 /ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի նշվել/, լուսամփոփի իրանի նյութը – ալյումինե համաձուլվածքպոլիմերային ծածկույթով, լուսացիրի նյութը- ПММА +թրծած ապակի /ՍՊԸ-ի կողմից ընդհանրապես չի նշվել/:

Մինչդեռ՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի համաձայն՝ սահմանվել են հետևյալ պարամետրերը՝

1-ին չափաբաժին՝ FHB 03-230-50-D60 տիպի, կամ համարժեքը,աշխատանքային լարում՝ 230Վ, հզորություն՝ 230Վտ, սնող ցանցի լարում՝ 176-264Վ, ցանցի հաճախականություն՝ 47-63Հg, հզորության գործակիցը (cosF) ոչ պակաս-0,96, լուսամփոփի հոսանքի ծախսը ոչ ավելի-0,7Ա, հոսանքահարումից պաշտպանության դաս՝ 1, լուսադիոդների քանակը-570, լուսադիոդների լուսայի հոսքը-40771 լմ, լուսամփոփի լուսային հոսքը-32109 լմ, գունային ջերմաստիճը-4700-5300 Կ, լուսային հոսքի տատանումը-1%, շահագործման ջերմաստիճանը- -40^{0}C ÷ 50^{0}C, կլիմայական կատարումը Y-1, շրջակա միջավայրի ազդեցությունից պաշտպանության աստիճանը-IP66, լուսամփոփի իրանի նյութը-ալյումինե համաձուլվածք պոլիմերային ծածկույթով, լուսացիրի նյութը - ՊՄՄԱ+թրծած ապակի , ամրացումը-կախովի, եզրաչափսերը 320x215մմ, քաշը ոչ ավել-8կգ, աշխատանքային պաշարը ոչ պակաս-100000 ժամ, արտադրական երաշխիքը 5 տարի:

2-րդ չափաբաժին՝ Լուսադիոդային, YCC-70 կամ համարժեքը , հզորությունը 75 Վտ, լուսային հոսքը 9400լմ, գաբարիտ՝ 868x214x98 մմ, աշխատանքային ջերմաստիճանի ընդգրկույթը -60^{0}C÷ +50^{0}C:

Ելնելով վերոգրյալից՝ Ընկերությունը խնդրել է 13.04.2020թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/36 բողոքը բավարարել:

«Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.04.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

2. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«ՀԱԷԿ» ՓԲ ընկերությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.04.2020թ. հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կարիքների համար լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով 19.03.2020թ. հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնման

ընթացակարգը, որին մասնակցության հայտ են ներկայացրել ИП «Аветисян Айк Вазирович», «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ», «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ», «Արմլեդ» և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերությունները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի ե) պարբերությունը՝ գնահատող հանձնաժողովի 01.04.2020թ. թիվ 3 որոշմամբ մերժվել է ИП Аветисян Айк Вазирович մասնակցության հայտը, քանի որ Էլեկտրոնային գնումների «armeps» համակարգում կցված չի եղել հայտի ապահովումը, ինչպես նաև մինչև հայտերի բացմանը հաջորդող աշխատանքային օրվա 17:00-ն այն չի ներկայացվել հանձնաժողովին:

Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը՝ գնահատող հանձնաժողովի 01.04.2020թ. թիվ 3 որոշմամբ անբավարար է գնահատվել և մերժվել «Արմլեդ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «Արմլեդ» ՍՊԸ-ի մասնակցության հայտի հավելվածների հղումները առկա չեն եղել Էլեկտրոնային գնումների «armeps» համակարգում, ինչի հետևանքով հանձնաժողովը հնարավորություն չի ունեցել գնահատել «Արմլեդ» ՍՊԸ-ի մասնակցության հայտը:

Պատվիրատուն հայտնել է, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բնութագրի վերաբերյալ հանձնաժողովը արձանագրել է, որ առաջարկվող ապրանքի երկրաչափական չափսերը և լուսային հոսքը չեն համապատասխանում հրավերին, իսկ համաձայն ներկայացված բողոքի՝ աչք է փակվել այդ անհամապատասխանությունների վրա: Ավելին, Կարգի 41-րդ կետի համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին առաջարկվել է շտկել արձանագրված անհամապատասխանությունները և դիտարկելով շտկված բնութագիրը՝ հանձնաժողովը բավարար է գնահատել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի մասնակցության հայտը:

Ինչ վերաբերում է «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բութագրին, Պատվիրատուն հայտնել է, որ այն հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանված է «կամ համարժեք» և «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, օգտվելով օրենքով իրեն ընձեռնված հնարավորությունից, մրցույթին մասնակցել է հրավերով սահմանված ապրանքին համարժեք ապրանքով, որի տեխնիկական բնութագիրը ամբողջովին բավարարում էր հրավերի պահանջներին: Բողոքաբերի կողմից նշված

«միտումնավոր չնկատված» անհամապատասխանությունները առաջարկվող ապրանքը բնութագրում են հստակ և բավարար, մասնավորապես.

- ցանցի հաճախությունը հրավերով սահմանված է 47-ից 63 Հց, սակայն «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ առաջարկում է 45-ից 65 Հց, որը, ընդգրկելով ավելի մեծ հաճախություն (ներառյալ պահանջվող 47-ից 63 Հց), ապահովում է լուսատուի ավելի լավ և երկարաժամկետ աշխատանք՝ ապահովագրելով ցանցի տատանումներից: Փաստացի ստացվում է, որ առաջարկվում է հրավերին համարժեք և առավել պարամետրով ապրանք;
- հզորության գործակցի ներկայացում չի պահանջվել, քանի որ հզորության գործակիցը կախված է հզորությունից, լարումից և հոսանքից (հզորությունը հավասար է լարման, հոսանքի և հզորության գործակցի արտադրյալին), իսկ այս երեք մեծություններն էլ ներկայացված են և բավարարում են հրավերի պահանջներին հետևաբար չի կարող հզորության գործակիցը այնպիսի մեծություն ունենալ, որը չբավարարի հրավերի պահանջներին :
- լուսադիոդների քանակը չի պահանջվել, քանի որ մասնակցի կողմից առաջարկվող լուսատուի լուսային հոսքը ավել է հրավերով սահմանվածից և հետևաբար կարևոր չէ արդեն 1 լուսադիոդով կստացվի տվյալ լուսային հոսքը, 570, թե՛ 600;
- «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող համարժեք լուսամփոփն ունի հրավերով սահմանված 32109Լմ-ից ավելի բարձր լուսամփոփի լուսային հոսք՝ 33300Լմ,
- գունային ջերմաստիճանը հրավերում նշված է 4700-ից 5300Կ, «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն առաջարկում է 5000Կ, որը գտնվում է հրավերով սահմանված դիապազոնում և ենթակա չէ մերժման:

Պատվիրատուն նշել է, որ գնահատող հանձնաժողովը իր գործունեությամբ ապահովել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նպատակը՝ խնայելով «ՀԱԷԿ»ՓԲԸ-ի ֆինանսական միջոցները և ձեռք բերելով նախահաշվային արժեքից և «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ի գնային առաջարկից («Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ գնային առաջարկն է 28,800,000.0, իսկ «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի գնային առաջարկը՝ 19,920,000.0, արդյունքում 8,800,000.0 տարբերություն) զգալի ցածր արժեքով և առավել բարձր պարամետրերով լուսամփոփներ:

Ի կատարումն ՀՀ Կառավարության ս/թ մարտի 3-ի թիվ 298-Ն որոշման՝ Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակի հետ կապված «ՀԱԷԿ»

ՓԲԸ-ի աշխատակիցների մի մասը, այդ թվում՝ գնահատող հանձնաժողովի անդամները աշխատել են հեռահար: «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, քաջ գիտակցելով մասնակցի շահերը, այս դժվարին իրավիճակում գործունեությունը (ինչպես պատվիրատուի այնպես էլ մասնակիցների) չտապալելու նպատակով, չի կասեցրել գնման ընթացակարգերը:

Հնարավորինս շփումը նվազեցնելու նպատակով, հանձնաժողովի անդամները իրենց պարտականությունները կատարել են հեռահար ռեժիմով: Հաշվի անելով այն հանգամանքը, որ հանձնաժողովի անդամները ստորագրման համար պետք է գտնվեն «ՀԱԷԿ» ՓԲԸ-ում՝ մասնակիցներին ծանուցումները իրականացվել են հանձնաժողովի անդամներից ստացված դիրքորոշումների հիման վրա կազմված արձանագրության միջոցով, որը չի ստորագրվել, պայմանով, որ առաջին իսկ «ՀԱԷԿ» ՓԲԸ այցի դեպքում կստորագրեն արձանագրությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ հոդվածի համաձայն՝ հանձնաժողովի նիստի արձանագրությունը հրապարակվում է տեղեկագրում (բայց չի նշվում որ ուղարկվում է մասնակցին):

Կարգի 41-րդ համաձայն՝ մասնակիցը ծանուցվում է անհամապատասխանության շտկման նպատակով կամ երբ հրավիրվում է բանակցությունների, բայց չկա նշում, որ պատվիրատուն պետք է բոլոր արձանագրություններն ուղարկի բոլոր մասնակիցներին:

Պարտադիր պայման է հանդիսանում տեղեկագրում հրապարակումը, ինչն արվել է՝ գնահատող հանձնաժողովի ամբողջական կազմի ստորագրությամբ առկա արձանագրությունը հրապարակելով տեղեկագրում: Հրապարակումները կատարվել են ուշացումներով՝ ՀՀ-ում հայտարարված արտակարգ իրավիճակից ելնելով:

Պատվիրատուն նշել է, որ հաշվի առնելով բողոքաբերի կողմից ներկայացված բարձր գնային առաջարկը մյուս մասնակիցների նկատմամբ՝ անհասկանալի է դառնում բողոքի նպատակը և երկրում տիրող արտակարգ իրավիճակի պայմաններում պետական կառույցների աշխատանքների համար լրացուցիչ խոչընդոտներ և պատվիրատուի համար լրացուցիչ ֆինանսական բեռ ստեղծելը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ Պատվիրատուն հայտնել է, որ ներկայացված բողոքն անհիմն է, քանի որ գնահատող հանձնաժողովը գործել է բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքով, Կարգով և այլ իրավական ակտերով սահմանված նորմերով՝ ապահովելով գնման գործընթացի մրցակցային, համաչափ և ոչ խտրական կազմակերպումը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/36 ընթացակարգի շրջանակներում 22.04.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.

«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի տնօրենի կողմից 17.04.2020թ. ներկայացվել է գրավոր միջնորդություն՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/36 բողոքով իրեն որպես կողմ ներգրավելու վերաբերյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից միջնորդությունը բավարարվել է:

«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ն ներկայացված բողոքում նշել է, որ «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի մեջ առկա են մի շարք շեղումներ, մինչդեռ «Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բնութագիրն էլ տատատնվել է պատվիրատուի պահանջից, այն է՝

1. FHB 03-230-50-D60 տիպի-«ՀԱԷԿ» ՓԲԸ- FHB 03-230-850-D60 տիպի- «Ռեֆորս գրուպ» ՍՊԸ,

2. լուսամփոփի լուսային հոսքը – 32109 լմ -«ՀԱԷԿ» ՓԲԸ- 32857 Լմ «Ռեֆորս գրուպ» ՍՊԸ :

«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն վկայակոչել է հետևյալ իրավական կարգավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է ՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման

գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն ՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի ա) պարբերության համաձայն՝ պատասխանատու ստորաբաժանումը կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը :

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքներիկ գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը,իսկ հրավերով նախատեսված դեպքում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը :

«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի ներկայացրած տեխնիկական բութագիրը հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար և չեն մերժվել որակավորման փաստաթղթերը, միևնույն ժամանակ նաև պարտվիրատուի կողմից չի առաջարկվել մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել և հետ ուղարկել նոր որակավորման փաստաթղթեր, քանի որ Օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հրավերով սահմանված է «կամ համարժեք» և «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, օգտվելով օրենքով իրեն ընձեռնված հնարավորությունից, մրցույթին մասնակցել է հրավերով սահմանված ապրանքի համարժեք ապրանքով, որի տեխնիկական բնութագիրը ամբողջովին բավարարում էր հրավերի պահանջներին: Բողոքաբերի կողմից նշված «միտումնավոր չնկատված» անհամապատասխանությունները առաջարկվող ապրանքը բնութագրում են հստակ և բավարար, մասնավորապես.

- ցանցի հաճախությունը հրավերով սահմանված է 47-ից 63 Հց, սակայն «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ առաջարկում է 45-ից 65 Հց, որը, ընդգրկելով ավելի մեծ հաճախություն (ներառյալ պահանջվող 47-ից 63 Հց), ապահովում է լուսատուի ավելի լավ և երկարաժամկետ աշխատանք՝ ապահովագրելով ցանցի տատանումներից: Փաստացի ստացվում է, որ առաջարկվում է հրավերին համարժեք և առավել պարամետրով ապրանք;
- հզորության գործակցի ներկայացում չի պահանջվել, քանի որ հզորության գործակիցը կախված է հզորությունից, լարումից և հոսանքից (հզորությունը հավասար է լարման, հոսանքի և հզորության գործակցի արտադրյալին), իսկ այս երեք մեծություններն էլ ներկայացված են և բավարարում են հրավերի պահանջներին հետևաբար չի կարող հզորության գործակիցը այնպիսի մեծություն ունենալ, որը չբավարարի հրավերի պահանջներին;
- լուսադիոդների քանակը չի պահանջվել, քանի որ մասնակցի կողմից առաջարկվող լուսատուի լուսային հոսքը ավել է հրավերով սահմանվածից և հետևաբար կարևոր չէ արդեն 1 լուսադիոդով կստացվի տվյալ լուսային հոսքը, 570, թե՛ 600;
- «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող համարժեք լուսամփոփը ունի հրավերով սահմանված 32109Լմ-ից ավելի բարձր լուսամփոփի լուսային հոսք՝ 33300Լմ, գունային ջերմաստիճանը հրավերում նշված է 4700-ից 5300Կ, «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն առաջարկում է 5000Կ, որը գտնվում է հրավերով սահմանված դիապազոնում և ենթակա չէ մերժման:

«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն ցանկացել է ընդգծել այն հանգամանքը, որ «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 28 800 000, գնային առաջարկ իսկ «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 19 920 000 գնային առաջարկ:

Այսինքն՝ գնային առաջարկներում առկա է եղել բավականին մեծ չափի՝ մոտ 8 800 000 ՀՀ դրամի զգալի տարբերություն, ինչն էական ազդեցություն կարող է ունենալ երկրի տնտեսության վրա, հատկապես Հայաստանի Հանրապետությունում հայտարարված արտակարգ իրավիճակի պայմաններում:

«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲՔԱ-ՆԳ-2020/36 ընթացակարգի շրջանակներում 22.04.2020թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով իր հերթին պնդել է վերը շարադրված դիրքորոշումը:

4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/36 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ», «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ», և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերությունները:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցներից «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ», «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերությունների հայտերը (տվյալներ հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասով և տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին՝ բացառությամբ թիվ 1.1 Հավելվածի) գնահատվել են բավարար:

3. Նույն արձանագրության համաձայն՝ մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով

սահմանված պահանջների մասով «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար, իսկ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերությունների հայտերում գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1 չափաբաժնի համար առաջարկվող լուսատուի երկրաչափական ձևը և չափերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ինչպես նաև փոքր է լուսային հոսքը, իսկ «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի անվան դաշտում նշված չէ ապրանքի անվանումը:

4. Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը՝ առաջարկելով «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերություններին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ. նիստի թիվ 3.1 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, դիտարկելով «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերությունների ներկայացրած Հավելված 1.1-ը, որոշում է կայացրել վերջիններիս հայտերը դրական գնահատելու վերաբերյալ:

6. Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությանը թիվ 1 և 2 չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու և վերջինիս լուսավորման սարքերի և լամպերի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ի կողմից 13.04.2020թ. ներկայացված բողոքը՝ կից փաստաթղթերով, «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի դիրքորոշումը, «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը, ինչպես նաև «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի դիրքորոշումը, գտնում եմ, որ բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածը սահմանում է՝

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է

ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար լուսավորման սարքերի և լամպերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ են ներկայացրել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ», «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ», և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.04.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցներից «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ», «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերությունների հայտերը (տվյալներ հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասով և տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին՝ բացառությամբ թիվ 1.1 Հավելվածի) գնահատվել են բավարար:

Նույն արձանագրության համաձայն՝ մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջների մասով **«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է բավարար**, իսկ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերությունների հայտերում գնահատող հանձնաժողովն արձանագրել է անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «**ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից թիվ 1 չափաբաժնի համար առաջարկվող լուսատուի երկրաչափական ձևը և չափերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ինչպես նաև փոքր է լուսային հոսքը, իսկ «Ռեֆորս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ապրանքի անվան դաշտում նշված չէ ապրանքի անվանումը**:

Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, հանձնաժողովը որոշում է կայացրել կասեցնել նիստը՝ առաջարկելով «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերություններին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.04.2020թ. նիստի թիվ 3.1 արձանագրության համաձայն՝ **գնահատող հանձնաժողովը, դիտարկելով «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» և «Ռեֆորս Գրուպ» ՍՊ ընկերությունների ներկայացրած Հավելված 1.1-ը, որոշում է կայացրել վերջիններիս հայտերը դրական գնահատելու վերաբերյալ**:

Նույն արձանագրությամբ գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությանը թիվ 1 և 2 չափաբաժինների մասով ընտրված մասնակից

ճանաչելու և վերջինիս լուսավորման սարքերի և լամպերի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու վերաբերյալ:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի՝ պայմանագրի նախագծի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ***սահմանվել է ապրանքի տեխնիկական բնութագիր՝ բաղկացած գնման առարկայի բազմաթիվ հատկանիշներից:*** Սակայն ***«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» և «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերի մեջ թե՛ 1-ին և թե՛ 2-րդ չափաբաժինների մասով կամ բացակայում են գնման առարկայի որոշ հատկանիշների վերաբերյալ տվյալներ, կամ դրանք ներկայացված են հրավերի՝ պայմանագրի նախագծի Հավելված 1-ով սահմանված տվյալ ապրանքի տեխնիկական բնութագրով նախատեսված հատկանիշներից տարբերվող հատկանիշներով:***

Մինչդեռ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովը ***«ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի դեպքում ընդհանրապես անհամապատասխանություններ չի արձանագրել, իսկ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրել է միայն հետևյալ անհամապատասխանությունները՝ թիվ 1 չափաբաժնի համար առաջարկվող լուսատուի երկրաչափական ձևը և չափերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ինչպես նաև փոքր է լուսային հոսքը:***

Այսպիսով՝ գտնում եմ, որ վերը շարադրված իրավական նորմերի համաձայն՝ ***Պատվիրատուն իր կարիքին համապատասխան գնման հայտով և գնման ընթացակարգի հրավերով ապրանքի տեխնիկական բնութագիրը կազմելիս սահմանում է ապրանքի ամբողջական նկարագիր՝ մանրամասն նշելով գնման առարկայի հատկանիշները, ուստի անհրաժեշտ է, որ գնահատող հանձնաժողովը մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը գնահատելիս հաշվի առնի հրավերով սահմանված ապրանքի ամբողջական նկարագրի յուրաքանչյուր հատկանիշ, այլապես պատվիրատուի կողմից ձեռքբերվելիք գնման առարկայի մանրամասն նկարագրությունը դառնում է իմաստազուրկ:***

Ելնելով վերոգրյալից, հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ անհրաժեշտ է, որ գնահատող հանձնաժողովը մանրամասն ուսումնասիրի «ԱՐՄԱ

ԹՐԵՅԴ» և «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված թիվ 1.1 Հավելվածով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերը՝ դրանք համեմատելով Ընթացակարգի հրավերի՝ պայմանագրի նախագծով՝ թիվ 1 և 2 չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար սահմանված տեխնիկական բնութագրերի հետ և արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասով կիրառի Կարգի 41-րդ կետով սահմանված դրույթը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ռեֆորս գրուպ» ՍՊԸ-ի բողոքը բավարարել:

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-41/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ի և «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու, ինչպես նաև «ԱՐՄԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից հայտարարելու մասին որոշումները:

2. Կիրառել ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով և 41-րդ կետով սահմանված պահանջները:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**